

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ



ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Տ. ԳՈՒՍԱՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼԱՆՆԵԱՆԻ

Աւագանի անունով Արամ, ծնած է Պոլիս, 13 Մարտ, 1965-ին: Աշակերտած է տեղւոյն Գարակէօզեան եւ Եսայեան վարժարաններուն: 1975-ին Երուսաղէմ գալով՝ մէկ տարի կ'աշակերտի Սբ. Թարգմանչաց վարժարանին եւ ապա կ'անցնի Ժառանգաւորաց վարժարան, որուն ընթացքը աւարտելէ ետք, 1982-ին կը ձեռնադրուի սարկաւագ: 1983-ին ձեռամբ օրուան Լուսարարապետ Տ. Գարեգին Արք. Գազանճեանի ձեռնադրուած է կուսակրօն քահանայ՝ վերակոչուելով Տ. Գուսան Աբեղայ:

1986-1988 թթ. եղած է փոխ-տեսուչ Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի:

1985-1987 թթ. եղած է Եաֆայի եւ Հայֆայի Տեսուչ:

1990-2013 տարիներուն Իսրայէլի եւ արտերկրի մէջ կատարած է աւելի քան հարիւր համերգներ: Տուած է հարիւրէն աւելի դասախօսութիւններ Հայ Եկեղեցւոյ Պատմութեան, Աստուածաբանութեան եւ արուեստի մասին: Այդ տարիներուն եղած է նաեւ Սուրբ Երկրի «Ecumneic circle of the friends» կազմակերպութեան անդամ:

1991-1993 ուսանած է Երուսաղէմի Սուրբ Երկրի Աստուածաշնչեան համալսարանին մէջ: Նոյն տարիներուն եղած է Տեսուչ՝ Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի եւ դասաւանդած է Հայ Եկեղեցւոյ Պատմութիւն Ժառանգաւորացէն ներս:

2002-2013 տարիներուն եղած է Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման եւ դիւանագիտական յարաբերութեանց պատասխանատու:

2004-2006 տարիներուն Եբրայեան համալսարանի երաժշտութեան բաժնին կողմէ վկայուած է իբրեւ մագիստրոս (Master's Degree):

2013-ին հրաւիրուած է Ժնեւ եւ նշանակուած տեղւոյն Սբ. Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ:

2014-ին Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ նշանակուած է Զուիցերիոյ Առաջնորդական Տեղապահ:

2023-ի Մարտ 24-ին, ստացաւ Ծայրագոյն Վարդապետութեան 10 աստիճաններ, ձեռամբ՝ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:

Տարբեր տարիներուն Ս. Աթոռոյս Միաբանական Ընդհանուր Ժողովին կողմէ ընտրուած է նոյն ժողովի դիւանի, ինչպէս նաեւ Ս. Աթոռոյս Տնօրէն Ժողովի անդամ:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ****Տ. ՂԵՒՈՆԴ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ**

Աւագանի անունով Միսակ, ծնած է 24 Ապրիլ, 1972-ին Երեւան: Զաւակն է Ռուբէն եւ Նաթալիա Յովհաննիսեաններու:

1979-1989 տարիներուն սկզբնական կրթութիւնը ստացած է Երեւանի թիւ 76 միջնակարգ դպրոցի մէջ:

1989-1992 տարիներուն ուսանած է Երեւանի «Ռատիօ Էլեկտրակապի» տեխնիկումի մէջ:

1991-1997 տարիներուն աշխատած է Երեւանի «ԱրմենՏել» միջքաղաքային ցանցին մէջ:

1995-1997 տարիներուն ծառայած է Երեւանի Ս. Յովհաննէս եւ Ս. Զօրաւոր Եկեղեցիներուն մէջ:

1997-ին ընդունուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ընծայարան:

1999-ին Սբ. Հրեշտակապետաց Եկեղեցւոյ մէջ ձեռամբ օրուան Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի ձեռնադրուած է սարկաւազ:

2000-ի Օգոստոս 6-ին, Քրիստոսի Այլակերպութեան տօնին, ձեռամբ Երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի ձեռնադրուած է կուսակրօն քահանայ՝ վերակոչուելով Տ. Ղեւոնդ Աբեղայ:

2001-2002 տարիներուն եղած է Սբ. Յարութեան տաճարի փոխտեսուչ:

2001-2004 տարիներուն ուսանած է Մոսկուայի Հոգեւոր Ակադեմիայի Հայրաբանութեան բաժնին մէջ եւ վկայուած է որպէս դոկտոր:

2002-2003 տարիներուն եղած է Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման:

2006-2007 տարիներուն եղած է Սրբոց Թարգմանչաց վարժարանի տեսուչ:

2006-էն ցայսօր տեսուչն է Սբ. Հրեշտակապետաց վանքին:

2010-ի Մայիս 22-ին, ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Տ. Նուրհան Արք. Մանուկեա-

նի ստացած է վարդապետական մասնաւոր չորս աստիճաններ:

2016-ի Օգոստոսին, Հայ Երուսաղէմին նուիրուած իր լուսանկարներով Հայաստանի մէջ մասնակցած է FRESCO միջազգային փառատօնին եւ արժանացած է «PEACE AND LOVE» մրցանակին: Նոյն տարուան Հոկտեմբերին Հայ Երուսաղէմին նուիրուած իր լուսանկարներով Գերմանիոյ մէջ մասնակցած է «Հայ Մշակոյթի Օրեր Շտուտգարտում» ծրագրին:

2018-ին իր «HOLY FIRE THAT WON'T BE APPEARED ON TV. 2018» վաւերագրական շարժապատկերով Հայաստանի մէջ մասնակցած է FRESCO միջազգային փառատօնին եւ արժանացած է «BEST MESSAGE OF PATRIOTISM» մրցանակին:

2019-ին որպէս գնահատող Հայաստանի մէջ մասնակցած է FRESCO միջազգային փառատօնին:

2023-ի Մարտ 24-ին, ստացաւ Ծայրագոյն Վարդապետութեան 10 աստիճաններ, ձեռամբ՝ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:

Հեղինակ է ինը գիրքերու:

Տարբեր տարիներուն Ս. Աթոռոյս Միաբանական Ընդհանուր Ժողովին կողմէ ընտրուած է Տնօրէն Ժողովի անդամ:



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ



ԿՆԵՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Տ. ԽԱԴ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՃՈՒՆՏՈՒՐԵԱՆԻ

Աւագանի անունով Արմէն, ծնած է Պէյրութ, 18 Դեկտեմբեր, 1967-ին: Զաւակն է Հաճընցի Սարգիս եւ Լուսին Ճունտուրեաններու: Նախնական կրթութիւնը ստացած է Պէյրութի Ազգային Սահակ-Մեսրոպեան վարժարանին մէջ:

1979-ին ընդունուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց վարժարան, որուն վեցամեայ շրջանը աւարտած է 1985-ին:

1983-ին օրուան Լուսարարապետ՝ Տ. Գարեգին Արք. Գազանճեանի ձեռամբ ստացած է Ուրար կրելու իրաւունք: 1985-ին կը վերադառնայ Լիբանան հետեւելու կեանքի ազատ ասպարէզին: 1991-ին, կը վերադառնայ Երուսաղէմ շարունակելու Ընծայարանի բաժինը, որ կ'աւարտէ 1993-ին:

1993-ին ձեռնադրուած է Սարկաւագ ձեռամբ Երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի: 1994-ի Մայիսին հօրը ծանր հիւանդութեան պատճառով կը ստիպւի հեռանալ ընտանիքին սատարելու մտադրութեամբ: 1999-ին, համաձայն իր դիմումին վերստին կ'ընդունուի որպէս միաբան ծառայելու սրբատեղեաց մէջ:

2000-ի Օգոստոս 6-ին, Քրիստոսի Այլակերպութեան տօնին, ձեռամբ Երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի ձեռնադրուած է կուսակրօն քահանայ՝ վերակոչուելով Տ. Խադ Աբեղայ:

2000-2006 տարիներուն եղած է Բեթղէհէմի Սբ. Ծննդեան տաճարի փոխտեսուչ, իսկ 2006-2018-ին՝ տեսուչ:

2010-ի Մայիս 22-ին, ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Տ. Նուրհան Արք. Մանուկեանի ստացած է վարդապետական մասնաւոր չորս աստիճաններ:

2021-ին եղած է Սբ. Փրկչայ վանքի տեսուչ:

2021-էն ցայսօր Սբ. Յակոբեանց Մայր տաճարի Ժամօրհնողն է:

2023-ի Մարտ 24-ին, ստացաւ Ծայրագոյն Վարդապետութեան 10 աստիճաններ, ձեռամբ՝ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ



ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Տ. ԿՈՐԻԻՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՎԱՍԱՐԵԱՆԻ

Աւագանի անունով Յովնան, ծնած է 26 Յունիս, 1980-ին, Աշտարակի շրջանի Սասունիկ գիւղին մէջ: Նախնական կրթութիւնը ստացած է գիւղի Գէորգ Զաւուշի անուան միջնակարգ դպրոցի եւ Աշտարակի Մխիթար Սեբաստացիի անուան գիմնազիոյ մէջ:

1995-ին ընդունուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց վարժարան, ապա Ընծայարան:

2000-ի Օգոստոս 4-ին ձեռնադրուած է սարկաւագ:

2003-ի Սեպտեմբեր 28-ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ՝ ձեռամբ երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի՝ վերակոչուելով Տ. Կորին Աբեղայ:

2004-2009 տարիներուն ուսանած է Երուսաղէմի Եբրայական համալսարանի մէջ՝ հետեւելով Մանկավարժութեան, Սոցիոլոգիայի եւ Հասարակական Անտրոպոլոգիայի դասընթացներուն:

2005-ին եղած է Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի քարտուղար:

2008-էն ցայսօր Ընծայարանի մէջ կը դասաւանդէ Ընկերաբանութիւն եւ Հայ Եկեղեցւոյ Պատմութիւն առարկաները:

2009-ին եղած է Սրբոց Յակոբեանց տպարանի տեսուչ:

2010-ի Մայիս 22-ին, ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Տ. Նուրհան Արք. Մանուկեանի ստացած է վարդապետական մասնաւոր շորս աստիճաններ:

2010-2013 տարիներուն ուսանած է գերազանցութեամբ աւարտած է Երուսաղէմի Եբրայական համալսարանի Կրթութեան Կառավարում մագիստրատուրայի բաժինը:

2012-ին եղած է Կալուածոց գրասենեակի փոխտեսուչ:

2013-2015 տարիներուն ուսանած է գերազանցութեամբ աւարտած է Երուսաղէմի Եբրայական համալսարանի Միջազգային Յարաբերութիւններ մագիստրատուրայի բա-

Ժինը:

2014-ին Միաբանական Ընդհանուր Ժողովի կողմէ ընտրուած է Տնօրէն Ժողովի անդամ, ապա՝ նոյն Ժողովի ատենադպիր:

2014-ին կը ստանայ Ֆրանսիայի Արարատ Գիտութեանց Միջազգային Ակադեմիայի պատուաւոր անդամի կոչում:

2014-ին մասնակցած է Եկեղեցական Ներկայացուցչական Ժողովին՝ ներկայացնելով Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը:

2015-ին Տնօրէն Ժողովի կողմէ կը նշանակուի Սուրբ Տեղեաց Քարտուղար:

2016-ի Մարտ 16-ին նշանակուած է Սուրբ Աթոռոյս Դիւանապետ եւ Միջեկեղեցական յարաբերութեանց վարիչ:

2023-ի Յունուար 13-ին նշանակուած է Սուրբ Աթոռոյս Կալուածոց Տեսուչ:

2023-ի Մարտ 24-ին, ստացաւ Ծայրագոյն Վարդապետութեան 10 աստիճաններ, ձեռամբ՝ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:

